Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
70

ԱՇԽԱՐՀԱՀՌՉԱԿ ԳԻՏՆԱԿԱՆԸ
Պատմ. գիտ. դոկտոր Հ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

1978 թ. սեպտեմբերի 18-ին լրացավ մեր ժամանակի խոշորագույն աստղաֆիզիկոս և գիտության ականավոր կազմակերպիչ Վիկտոր Համազասպի Համբարձումյանի ծննդյան 70-ամյակը։

Վիկտոր Համբարձումյանի բազմաբեղուն կյանքի ուղիղ կեսը՝ 35 տարին, ձուլված է Հայաստանի գիտությունների ակադեմիայի ստեղծման, կայունացման և վերելքի հետ։ Համբարձումյանը արդեն 32 տարի անընդմեջ գլխավորում է մեր ակադեմիայի գործունեությունը՝ որպես պրեզիդենտ։

Խոսել Վիկտոր Համբարձումյանի մասին, նշանակում է խոսել նաև Հայաստանի գիտությունների ակադեմիայի մասին, գիտության վերելքի, այն անգնահատելի ավանդի մասին, որ նա ունի հանրապետությունում գիտության բազմաթիվ բնագավառների ստեղծման, զարգացման, գիտության և արտադրության կապի ամրապնդման գործում, գիտության և ժողովրդական տնտեսության աշխատողների համագործակցության ընդլայնման, գիտության նվաճումների ժողովրդայնացման, գիտական կադրերի աճի, գիտության նյութատեխնիկական բազայի ստեղծման, Հայաստանի գիտությունը ժամանակակից մակարդակին բարձրացնելու բնագավառներում։

Հայտնի է, որ հանրապետական ակադեմիայի հիմնադրումից առաջ Հայաստանում առավել ներկայացված էին քիմիան, երկրաբանությունը, էներգետիկան, ճանաչում էին գտել հայ ժողովրդի պատմության, հայոց լեզվի և գրականության պրոբլեմների ասպարեզում կատարվող ուսումնասիրությունները։

Կյանքը պահանջում էր աշխատանքի ընդլայնում և խորացում բնական, ճշգրիտ և տեխնիկական գիտությունների բնագավառում, մեծ թվով գիտական ուղղությունների ընդգրկում։ Այդ պահանջը ավելի ակնհայտ դարձավ Հայրենական պատերազմի տարիներին։ Եվ երբ 1943 թ. իրականացավ հայ ժողովրդի դարավոր իղձը, ստեղծվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան, նրա առջև առաջին իսկ օրից հարց ծառացավ՝ հանրապետությունում ստեղծել ժամանակակից գիտական ուղղությունների կոմպլեքս՝ նոր պահանջներին համապատասխան։ Եվ ակադեմիան, որի ղեկի մոտ առաջին օրերից, որպես առաջին վիցե-պրեզիդենտ, կանգնած էր Վիկտոր Համբարձումյանը, ընտրեց ճիշտ ուղի։ Հենց սկզբից կուրս վերցվեց չկրկնել ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի համապատասխան հիմնարկներին, ուժերը կենտրոնացնել որոշակի, երբեմն նեղ խնդիրների վրա, գիտության յուրաքանչյուր ճյուղում ունենալ ինքնատիպ, ուրույն դեմք։

Այս կուրսն իր արտահայտությունը գտավ Վիկտոր Համբարձումյանի՝ ակադեմիայի ընդհանուր ժողովին 1946 թ. հունիսի 21-ին ներկայացրած

«Ակադեմիայի զարգացման հնգամյա պլանը» զեկուցման մեջ. «Մեր առաջ դրված խնդիրները հաջող լուծելու համար մենք պետք է մեզ մոտ՝ Հայաստանում, վճռական բեկում մտցնենք ֆիզիկամաթեմատիկական, բնական ու տեխնիկական գիտությունների բնագավառում, վերցնենք ուժերի այն փոխհարաբերությունը, որ պատմականորեն ստեղծվել է մեկանում, մեծ չափերով օգնենք Հայաստանի նորաստեղծ արդյունաբերական ձեռնարկություններին վճռական շրջադարձ կատարելու դեպի ֆիզիկամաթեմատիկական, բնական և տեխնիկական գիտությունները, զարկ տանք երիտասարդ գիտական կադրերի պատրաստման գործին»։

Այնուհետև մեզ մոտ առանձնահատուկ ուշադրություն էր դարձվելու գիտության այն ճյուղերի զարգացման վրա, որոնք մինչև ակադեմիայի հիմնադրումը հանրապետությունում ներկայացված չէին։ Նախատեսվում էր զարգացնել աստղաֆիզիկան, տիեզերական ճառագայթների ֆիզիկան, մաթեմատիկան, սիլիկատների քիմիան, մեխանիկան, էլեկտրատեխնիկան, ագրոքիմիան, դեղաբանական քիմիան, բույսերի ֆիզիոլոգիան, հասարակական գիտությունների ժամանակակից ճյուղերը։ Հինգ տարվա ընթացքում ակադեմիայի 24 հիմնարկներում մշակվելու էր 95 պրոբլեմ (34-ը ֆիզիկամաթեմատիկական, բնական և տեխնիկական գիտությունների գծով, 11-ը՝ գյուղատնտեսական, 23-ը՝ կենսաբանական, 25-ը՝ հասարակական գիտությունների գծով)։

Մշակելով Հայաստանի գիտության զարգացման մայրուղիները և ստրատեգիան, Վիկտոր Համբարձումյանը սահմանեց և նրանց իրականացման տակտիկան, կազմակերպական հիմունքները, աշխատանքի գիտական կազմակերպման, գիտական աշխատանքի արդյունավետության մեծացման, գիտության և արտադրության միջև օրգանական կապի ապահովման սկզբունքները, նրանց լուծման ուղիները, նրա ուրույն դեմքը։

Եվ ակադեմիան, 1947 թ. հունվարից, իր 442 գիտական աշխատակիցներով (71 դոկտոր, 188 գիտությունների թեկնածու) ձեռնամուխ եղավ մշակված ծրագրի իրականացմանը՝ համախմբել Հայաստանի գիտական միտքը, դյուրավորել այն, գիտական վերլուծության բովով անցկացնել հարատատ ժողովրդի բովանդակ մշակույթը, հայտնաբերել բյուրեղացած արժեքները ազգային և համամարդկային իմաստով, դրանով իսկ իր լուման մտցնելով Սովետական Միության բոլոր ժողովուրդների գիտությունների գանձարանը, էլ ավելի մեծ չափով ներազդել մշակույթի, Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման վրա, նպաստել հայ ժողովրդի ինքնաճանաչումը բարձրացնելուն, խորացնել սովետական հայրենասիրությունը, գիտակցական ուժ զարգացնել դեպի հայրենիքը, լեզուն, մշակույթը, հավատ դեպի պայծառ ապագան։

Վ. Համբարձումյանի գլխավորությամբ, նրա նախաձեռնությամբ, անմիջական մասնակցությամբ իրականացավ 1946 թ. իր իսկ առաջ քաշած ծրագիրը. «Մենք պետք է ստեղծենք և կառուցենք նորագույն տեխնիկայով հարուստ սարքավորված լաբորատորիաներ և ինստիտուտներ»։ Ստեղծվեցին ու կառուցվեցին ֆիզիկայի ինստիտուտը, մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտը, Բյուրականի աստղադիտարանը, էլեկտրատեխնիկայի լաբորատորիան, փիլիսոփայության սեկտորը, արվեստի տեսության և պատմության սեկտորը, դեղագործական քիմիայի լաբորատորիան, սրտաբանության և

սրտային վիրաբուժության ինստիտուտը, կենսաբանության սեկտորը, ապա ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմոլոգիայի, կենսաքիմիայի, տնտեսագիտության, արվեստի, հնագիտության և ազգագրության, մանրէակենսաբանության, ագրոքիմիական պրոբլեմների, փորձարարական կենսաբանության, օրգանական քիմիայի, անօրգանական քիմիայի, նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտները, Բյուրականի օպտիկա-մեխանիկական լաբորատորիան, հաշվողական կենտրոնը, կենտրոնական ֆիզիկատեխնիկական լաբորատորիան, ճառագայթային, գենետիկայի, բիոնիկայի և կենսաֆիզիկայի, քիմիական ֆիզիկայի լաբորատորիաները, ֆիզիկական հետազոտությունների, մաթեմատիկայի և մեխանիկայի, արևվելագիտության, փիլիսոփայության և իրավունքի, հիդրոպոնիկայի և ագրոքիմիական պրոբլեմների, ինքնուրույն կոնստրուկտորական-տեխնոլոգիական ինստիտուտները։

Ակադեմիայի համակարգում ծնված և հասակ առած 25-ից ավելի հիմնարկներ հանձնվեցին ժողովրդական տնտեսությանը՝ տարբեր մինիստրությունների և գերատեսչությունների։ Դրանք, սակայն, այսօր էլ սերտորեն կապված լինելով ակադեմիայի հետ, իրենց ավանդն են ներմուծում մեր երկրի գիտության և տեխնիկայի ընդհանուր վերելքի մեջ։

Այսպիսով, Վիկտոր Համբարձումյանի պրեզիդենտական գործունեության ընթացքում, ժամանակակից տեխնիկայի հիմքը կազմող բնագավառների զարգացման համար Հայաստանում ստեղծվեց հզոր գիտական բազա։ Ակադեմիայում պատրաստվեցին բարձրորակ գիտական կադրեր ժամանակակից գիտության գրեթե բոլոր բնագավառների գծով, գրադարանային ֆոնդը աճեց ավելի քան 30 անգամ, այդքանով էլ՝ կապիտալ շինարարության ծավալը և լաբորատոր սարքավորումները։

Գիտության հզոր կենտրոնի վերածված ակադեմիայի հիմնարկներում նոր ուժով պոռթկաց հայ ժողովրդի խիզախ և ստեղծագործ միտքը։ Սերտ համագործակցության մեջ մտնելով ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի, եղբայրական հանրապետությունների գիտությունների ակադեմիաների հետ, աճեցնելով երիտասարդ կադրեր, ընդլայնելով իմացության սահմանները, ակադեմիան ակտիվ մասնակիցը դարձավ այն մեծ պրոբլեմների լուծման, որոնք գրված են հայրենական գիտության առաջ։ Այսպիսով, հայ ժողովուրդը այսօր իր խոսքն է ասում համաշխարհային գիտության և մշակույթի առաջընթացի մեջ, որտեղ գնալով ավելի բարձր է հնչում Հայաստանի գիտնականների ձայնը, որոնք սկզբունքորեն նոր և ինքնատիպ շատ բան են տվել համաշխարհային և հայրենական գիտությանը։ Միայն իններորդ հնգամյակում ակադեմիայի հիմնարկներում ավարտվեց 721 թեմայի մշակումը, ժողովրդական տնտեսության մեջ ներդնելու համար արվեց 142 առաջարկություն, տպագրվեց 400 անուն գիրք, 13 գիտական ամսագրի 465 համար։ Այսօր 30 հիմնարկներում 500 թեմաների մշակմանը մասնակցում է 3000-ից ավելի աշխատակից։

Ակադեմիան այժմ միավորում է հանրապետության գիտության և տեխնիկայի 100 ամենաառաջավոր ներկայացուցիչներ՝ ակադեմիկոսներ և թղթակից անդամներ, որոնք իրենց գիտական պրակտիկայով և հայտնագործումներով, դասական հարուստ ժառանգության հիման վրա, կերտել են մեր ակադեմիայի ուրույն դեմքը։ Սկզբունքային նշանակություն ունեցող աշխատու-

թյուններով հարստացնելով հայրենական և համաշխարհային գիտությունը, առնականանալով, հայ գիտական միտքը իր վրա է գրավել գիտական լայն հասարակայնության ուշադրությունը, դարձել արժանի ժառանգորդը դեռևս հին դարերում պատմական թատերաբեմ ելած ժողովրդի գիտական գոհարների։

Համբարձումյան գիտնականի մեծության համընդհանուր ճանաչումը իր արտահայտությունն է գտել բազմաթիվ երկրների գիտությունների ակադեմիաների պատվավոր կամ արտասահմանյան անդամ ընտրվելու, ընկերությունների և համալսարանների պատվավոր դոկտոր ընտրվելու մեջ։ Համբարձումյանն արժանացել է Սլովակիայի գիտությունների ակադեմիայի, Բրիտանական աստղագիտական թագավորական ընկերության, Խաղաղօվկիանոսյան աստղագիտական ընկերության, Գերմանիայի ակադեմիայի և բնախույզների ակադեմիայի ոսկե մեդալներին։ Պարգևատրվել է Բուլղարիայի, Հունգարիայի, Լեհաստանի բարձրագույն շքանշաններով։

Վ. Հ. Համբարձումյանի գիտական վաստակի բարձր գնահատականի ցուցանիշներն են այն բազմաթիվ սովետական շքանշանները, մեդալներն ու պետական մրցանակները, որոնց արժանացել է նա։ Աստղագիտության զարգացման ասպարեզում ունեցած մեծ վաստակի համար և ծննդյան 60-ամյակի առթիվ 1968 թ. նրան շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում, իսկ սովետական գիտության զարգացման մեջ ունեցած ակնառու վաստակի և ծննդյան յոթանասունամյակի առթիվ Վ. Հ. Համբարձումյանը ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1978 թ. սեպտեմբերի 15-ի հրամանագրով պարգևատրվեց Լենինի շքանշանով և «Մուրճ ու մանգաղ» երկրորդ ոսկե մեդալով։

Սկսած 1950 թ. Համբարձումյանը գլխավորել է սովետական բոլոր պատգամավորությունները աստղագետների միջազգային բոլոր համագումարներում և գիտաժողովներում, հանդիսացել Սովետական Միության ներկայացուցիչը միջազգային և ազգային շատ համաժողովներում, խաղաղության կողմնակիցների համաժողովներում, մոտ 13 տարի եղել է Աստղագետների միջազգային միության փոխպրեզիդենտը և պրեզիդենտը։ Համբարձումյանի միջազգային գիտական համընդհանուր ճանաչման գլուխգործոցը հանդիսացավ երկու անգամ Գիտական միությունների միջազգային խորհրդի պրեզիդենտ ընտրվելը, խորհուրդ, որը միավորում է 60 երկրների ակադեմիաներ և միջազգային 15 միություններ։ Ի դեպ, Համբարձումյանը Սովետական Միության և սոցիալիստական երկրների միակ ներկայացուցիչն է, որ ընտրվել է այդ բարձր պոստում և այն էլ երկու անգամ՝ փարիզյան և մադրիդյան համագումարներում (ըստ կանոնադրության՝ խորհրդի պրեզիդենտի պոստում յուրաքանչյուր թեկնածուն ընտրվում է միայն մեկ անգամ)։

Վիկտոր Համբարձումյանի գործունեությունը, նրա անսահման հեղինակությունը մեծապես նպաստել են միջազգային գիտական համագործակցության հետագա ամրապնդմանը ժամանակակից գիտության կարևորագույն բնագավառներում, նպաստել սովետական գիտության հեղինակության բարձրացմանը ամբողջ աշխարհում։

Մեր ժամանակի ականավոր գիտնական, սովետական գիտության խոշորագույն կազմակերպիչ, մեր հայրենիքի հիանալի քաղաքացի և հայրենա-

սեր, ժողովրդին անսահմանորեն նվիրված հասարակական-քաղաքական գործիչ Վիկտոր Համբարձումյանը հսկայական գործունեություն է ծավալում որպես ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահության անդամ, ՍՍՀՄ Լենինյան և պետական մրցանակների կոմիտեի անդամ, ՀՍՍՀ պետական մրցանակների հանձնաժողովի նախագահ, ՍՍՀՄ բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովի անդամ, «Աստրոֆիզիկա» ամսագրի գլխավոր խմբագիր, «Հայկական Սովետական Հանրագիտարանի» խմբագրական խորհրդի նախագահ։

Միշտ ժողովրդի հետ, միշտ ժողովրդի համար, սովետական հայրենիքի հետագա հզորացման համար, ամբողջ աշխարհում խաղաղության ամրապնդման համար՝ ահա Վիկտոր Համբարձումյանի դավանանքը, կյանքի իմաստը։ Եվ այդ կրեդոն մենք տեսնում ենք նրա ամենօրյա բազմաբեղուն, անկուն, միշտ նորի զգացումով՝ նորարարական գործունեության մեջ, նրա հասարակական-քաղաքական ու պետական գործունեության մեջ։

Եվ ամեն ինչի հիմքում՝ նվիրվածությունը ՍՍՀՄ ժողովուրդների անխախտ բարեկամությանը, ինտերնացիոնալիզմին. «Գնահատելով և սիրելով հայ ժողովրդի դարավոր մշակույթը, մենք պետք է հիշենք և համամարդկային մշակույթի, և գիտության անընդգրկելի մեծության մասին, վերցնենք մյուս բոլոր ժողովուրդների մշակութային հարստությունը և, առաջին հերթին, ռուսական մշակույթի, ռուսական գրականության և արվեստի հիանալի ոլորտները»։

Որպես ակադեմիայի պրեզիդենտ, Վ. Հ. Համբարձումյանը պահանջում է, որ բոլոր գիտական աշխատողները պարզ տեսնեն իրենց առջև ծառացած խոշոր խնդիրները, խորապես ըմբռնեն, որ նրանց լուծումը հետապնդում է վեհ ու ազնիվ նպատակ, կապված է իրենց հայրենիքի և մարդկության ամբողջ առաջընթացի հետ։

Սովետական գիտական ողջ հասարակայնության հետ ողջունելով ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանին՝ նրա ծննդյան 70-ամյակի և կառավարական բարձր պարգևի առթիվ, ցանկանում ենք նրան երկար տարիների քաջառողջություն և աշխատանքային նորանոր հաջողություններ՝ ի փառս սովետական գիտության։